

«Ով է առաջադրել Եւրապոյն հոգևոր իշխանութեան այդ յանձնա ժողի անուանացուցակը, և ինչից դրդուած յայտնի չէ, մեզ թւում է, որ այդ անողը լաւ ծառայութիւն չէ մատուցանում հայոց դպրոցներին:

Ճշմարիտ է, յանձնաժողովի նախագահն համալսարանական է, երկար տարիներ վարել է ներսիսեան հոգևոր դպրանոցի և Ս. Էջմիածնի ճեմարանի տնօրէնութեան պաշտօնը, հետեապէս քաջ ծանօթ է դպրոցական գործին և ունի ահագին փորձառութիւն, հետեալաբար իւր տեղումն է, բայց Դեր. Նահապետ եպիսկոպոսից դէնը—միւս անդամները գրեթէ ամբողջութիւնը կազմուած է փաստարաններից, բժիշկներից և այլ տեսակ մարդկանցից, որոնք դպրոցական գործից հեռու են եղել և ուսուցիչ չեն ու մանկավարժ չեն:

Պատուական Համբարձում Առաքելեանի և Ալէքսանդր Քալանթարի անդամակցութիւնը մեզ չի դարձացնում, եթէ նրանք չըլինէին, այդ կարող էր մեզ դարձացնել. հայոց պղտոր երկինքը մեր ներկայ ու գալիք նեղութիւններն ի նկատի առնելով, շնորհել է մեզ նրանց: Նրանք այդ երկնքի ընտրեալներն են. դրանք ամեն տեղ և ամեն բանի ներկայացուցիչն են:

Դպրոցական յանձնաժողով .բայց զբոեղ են աշխարհականներից Ս. Մանգի-նեան, Մ. Կոստանեան, Փ. Վարդանեան, Ղ. Աղայեան, Բժ. Գարբիէլ Յովհաննիսեան, Չարխեան, Ս. Չահապարեան և այլն, և այլն, որոնց անունները այս բողոքէն չենք մտադրում, իսկ հոգևորականներից՝ Յ. Ղուկասեան, Գարեգեղ վարդապետ, Դ. Յովսէփեան, Բենիկ և այլն գործիչներ, որոնք իբրեւ անուշներ, իբրեւ ուսուցիչ մանկավարժներ իրենց կեանքը տառնեալ տարիներ մաշել են դպրոցներում և քաջ ծանօթ են մեր դպրոցների անցեալին և կարելի են իրեն:

Եթէ յանձնաժողովի կարելի լինի, ամենքը մեզ հետ պիտի համաձայնուին, որ դառ անդամները վերոյիշեալ կարգի գործիչներից պէտք է կազմուին: Ուրիշ տեսակ յանձնաժողովը կուսակցական, անձնական բան է և կլինի, և անշուշտ բացի կռիւնք ուրիշ էլ ոչ մի բան չի կարող առաջացնել:

Միթէ մենք չըպէտք է անցեալից խրատուենք. թնչու են ուզում ամեն մի բան զանգից կախել, ինչո՞ւ ենք աղմուկ բարձրացնում, վէճերի, կռիւների, տարակուսանքների դուռը բաց անում: Լռեցէք մեզ. իդուր էք կործում, ամեն բան ապահոված, վերջացրած է:

Մեր հաստատութիւններն իրենց դոյութեան այնպիսի շրջանն են մտել, որ այսուհետեւ մի սխալ բայր կորստաբեր է լինելու, կորուստը անվերադառնալի:

Խնդրում ենք Ս. Էջմիածնից. (որի ձեռքի տակն է մեր բոլոր հաստատութիւններն և պէտք է մնալ միշտ), փողոց չըձգէ մեր դպրոցները, խնդրում ենք մեր հոգևոր իշխանութիւնից խողալիք չը դառնայ անցաւոր մարդկանց, խմբակների ձեռքում: Բաւական համարէ թուլութեամբ մեր կրած բարոյական և ամեն կերպ հարուածները:

Թող լինէ Ս. Էջմիածինը, որ ամ և ձախ լսելով և եղեզնի պէս տատանւելով, նա մեր ազգի պարծանք՝ կաթողիկոսութիւնը, հազարաւոր տարիների վեհ. ս. Աթոռը ինչիցեց մի մահմեդական հասարակ կրօնաւորի աստիճանին:

Կայրիէի «Լուսաբեր» թերթը մեր ազգի ներկայ ինքնասպանութեան պատճառը գտնում է անհեռատեսների անհաշիւ ձեռնարկների մէջ. նա դաժնում է, որ հայ ազգը զանազան խրմ-

բաղնիքի շնորհիւ բարոյական խիստ ընկած վիճակի մէջ է գտնոււմ. և այս դրութեան պատճառներից մէկը համարոււմ է այն տարրերը,

«որոնք թուղթեր կը մրոտեն միմիայն ժողովուրդը «կը-
թելու» և ազգաւեր կոտորածներու առիթ տալու համար.
կրօնաւորներ, որոնք իրանց փակեղին կամ վեղարին կարծե-
ցեալ սրբութիւնը ի դործ կը դնեն միամիտ կիներ, անփորձ
օրիորդներ որսալու, ընտանիքներ քայքայելու համար, աշ-
խարհական ազգապետներ կամ խնամակալներ, որոնք իրենց
և իրենց կառավարութեան յանձնուած ժողովուրդին վարկն
ու պատիւը ամենախայտառակ կերպով տիղմերու մէջ կը
թաթաւեն»:

Բայց միթէ վեղարաւորի անբարոյութիւնը ազգաւեր կո-
տորածների առիթ կարող է լինել:

ՀԱՅ